

այս հավաքածուների մոտիվներից և զարգանալուներից:

Թանգարանի ազգագրական ֆոնդի մի մասը ցուցադրված է: Ցուցադրությունը սկսվում է նախնադարյան համայնական հասարակարգից՝ Արտին լեռան ստորոտում (Արագած) գտնված հեյլյան կուլտուրայի ցուցադրումով և ավարտվում է XIX դարի վերջի նյութերով: Ցուցադրությունը դասավորված է բոլոր հասարակության զարգացման ֆորմացիաների:

Ազգագրական ֆոնդի լավագույն նմուշները ցուցադրված են XVI—XIX դարերի հայ ժողովրդի պատմության և մշակույթի համատեղ ցուցադրության սրահում: Ազգագրական նյութերը պատմությանը զուգընթաց դասավորելուց բացի հաշվի են առնված նաև առանձին բնագավառները՝ գյուղատնտեսությունը հատկաց-

ված է հատուկ սրահ, արհեստներին՝ առանձին և այլն: Առանձին ազգագրական շրջանների տարազը, կենցաղային իրերը ցուցադրված են օպտադորմենով նաև բարանդներ, ազգագրական բնույթի նկարներ և այլն:

Թանգարանը կազմակերպել է հայ ժողովրդի պատմության շրջիկ ցուցահանդես, որի մեջ զգալի տեղ է հատկացված նաև ազգագրությանը:

Թանգարանի ազգագրական հարուստ ժողովածուները եղել են և երկար կծառայեն իբրև հայ ժողովրդի պատմության, նրա տնտեսության ու արտադրական կյանքի, կենցաղի, մշակույթի և արվեստի զանազան ճյուղերի ուսումնասիրման ու զննահաման կարևոր աղբյուր:

Ն. ԱՎԱԳՅԱՆ

ՓԱՐԻՉԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՄԱՍԻՆ

1. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

1920 թ. հունվարի 9-ին Փարիզի Արևելյան կենդանի լեզուների ազգային բարձրագույն դպրոցում հավաքված մի խումբ ֆրանսիացի դիտնականներ և արվեստագետներ՝ ականավոր հայագետներ Անտուան Մեյեն, Ֆրեդերիկ Մակլիլը, հ. Լուի Մարիեսը, հայ դարավոր մշակույթի և այն ստեղծած ժողովրդի բարեկամներ Բյուզանդագետ Շարլ Բիլը (Ֆրանս. ակադեմիայի անդամ), սլավոնագետ Պոլ Բուալեն, արվեստագետ (1929 թ. ակադեմիայի անդամ) Դարրիել Միլլեն, Արևելյան կենդանի լեզուների բարձր. դպրոցի տնօրեն Պոլ Ալֆանդերին, Կոմենդի-Ֆրանսեզի անվանի դերասանուհի Դարրիել Ռեվալը և ուրիշներ, ինչպես նաև ֆրանսիաբնակ մի քանի հայեր հիմնում են Société des Etudes arméniennes հայագիտական ընկերությունը և նրա պաշտոնական պարբերական Revue des Etudes arméniennes՝ հայագիտական հանդեսը: Մակայն դեռևս 1919 թ. աշնանը Ա. Մեյեն և Ֆ. Մակլիլը, որոնք շատ մեծ ավանդ են թողել հայագիտությանը, արդեն որոշել էին ընկերության նպատակը, նախագծել հանդեսի հեռանկարային ուղղությունը, և նրանց նախաձեռնությամբ էր հրավիրված հիմնադիր նիստը: Ուստի այդ երկու հայագետներին էլ պատկանում ընկերության և նրա հանդեսի ստեղծման պատիվը: Ըստ այնմ էլ առաջին հիմնադիր նիստում Մեյեն ներկաներին պարզարանում է հայագիտական ընկերության

նպատակը, այն է՝ զեկուցումներով, հաղորդումներով, հայագիտական նստաշրջաններով և հատկապես հայագիտական հանդեսի հրատարակությամբ Եվրոպայի առաջ բացել հայագիտության դռները, զարգացնել հայ ժողովրդի անցյալին և ներկային վերաբերող հետազոտությունները, հրատարակությունները, ճանաչել ալ հայ ժողովրդին, որը, ի հեճուկս պատերազմում կրած վայրագ ջարդերի, արհավիրքից մի անդամ ևս դուրս էր եկել վերավոր, բայց պահել էր իր կենսունակությունը: Մեյենի և Մակլիլի հիմնադրած հայագիտական այս ընկերությունը և հանդեսը մարդասիրական և հայասիրական այն միջոցառումներից էին, որ ֆրանսիացի ողջամիտ մտավորականները ծավալել էին պատերազմի ժամանակ և շարունակելու էին դրանից հետո՝ հայ ժողովրդի մշակույթը, բարոյական արժանիքները քաղաքակիրթ աշխարհին հայտնի դարձնելու և դրանով իսկ նրա ոտնակոխ արված իրավունքները պաշտպանելու նպատակով:

Առաջին նիստում ընտրվում է ընկերության վարչական կազմը՝ պատվավոր նախագահ՝ Դյուստավ Շլյուսերթե, ակադեմիայի անդամ. Նախագահ՝ Շարլ Դիլ. նախագահի տեղակալներ՝ սենատոր Վիկտոր Բերար (մահ. 1931 թ.), և Ա. Ֆ. Հերոլդ, Մարդու իրավունքների լիգայի նախագահի տեղակալ. զլխավոր քարտուղար՝ Ա. Մեյեն, Կոլեժ դը Ֆրանսի դասախոս. ակադեմիայի անդամ. կառավարիչ-դիվանուպետ՝

Ֆ. Մակլեր, Արևելյան կենդանի լեզուների ազգ. բարձ. դպրոցում հայոց լեզվի դասախոս. ղեկավար՝ Հ. Լակրուա, իր բուն հայկական անունով՝ Խ. Հյունրերպեյնսյան, Ընկերության ռեզիդենտական կանոնադրության համաձայն՝ վարչական կազմի բոլոր անդամները պետք է լինեն ֆրանսիացի, սակայն հետագայում (1924 թ.) մտցված փոփոխության համաձայն՝ վարչական կազմի մեծամասնությունը միայն պետք է լինեն ֆրանսիացի, որով ընկերությունն ունեցել է հայազգի գանձապահներ, ինչպես նաև նախագահի տեղակալ՝ վիպասան Լ. Գյումյուշ Գերդան։ Շ. Դիլը, Ա. Մեյեն և Ֆ. Մակլերն իրենց պաշտոններում, որոնք անվճար էին, մնացել են մինչև ընկերության վախճանը (1933 թ.)։

Առաջին նիստում քննարկվել և ընդունվել է հիմնադիրների նախագծած կանոնադրությունը, ըստ որի ընկերությունը կարող էին անդամակցել ինչպես ֆրանսիացիներ և ֆրանսուհիներ, այնպես էլ օտարազգիներ, առաջին հերթին, իհարկե, հայեր։ Հայ անդամներից են եղել Մ. Ս. Դավիթ-Բեկը, Ա. Զոպանյանը, Կ. Բասմաջյանը, Հ. Պերպերյանը, Եղիշե արք. Դուրյանը, Վ. Պաստակյանը, Ն. Ադոնցը, Զապել Եսայանը, Վ. Փորթուգալյանը, Աղաթունը, Զիթունին, Հ. Մսերյանը, Լ. Մելիքովը, Պողոս Նուպար Փաշան, Բորիս Երկայնարագուկ Արղությանը և շատ ուրիշներ։ Ընկերության անդամակցել են նաև Ն. Մաուր և Վ. Մինորսկին։ Հիմնադրման առաջին տարվա հունիսին անդամների թիվը եղել է 67, նույն տարվա վերջում՝ 118, երրորդ տարվա սկզբում՝ 211։ Թեև ընկերության հիմնադրումը պաշտոնապես հայտարարվել է Journal officiel de la République française պաշտոնաթերթերում (1920 թ. փետր. 5), սակայն անգամների հավաքագրումը մեծ մասամբ կատարվել է անձնական ծանոթությունների միջոցով։ Իր գրասենյակային և հանդեսի ծախսերը հոգալու համար ընկերությունը պետք է բանկար առնվազն 500 անգամ։

Հայագիտական ընկերությունը բաղկացած է եղել գործոն անդամներից, որոնք տարեկան վճարել են սահմանված անդամավճար (20—50 ֆր., նայած տարիներին), բարերար անդամներից, որոնք ընկերության գանձարանը միանվագ մուծել են առնվազն 250 ֆր., նվիրատու անդամներից, որոնք միանվագ մուծել են 500 ֆր.։ Ընկերության ընդհանուր ժողովն ընտրել է նաև պատվո անդամներ, որոնք անդամավճար չեն մուծել։ Այս բոլոր անդամները եղել են հրավահավասար, անվճար ստացել են ընկերության հանդեսը։ Սակայն նրանց «կարգերի» բաժանելով և յուրաքանչյուրից ըստ իր կարողության անդամավճար գանձելով՝ ընկերության

կազմակերպիչների միակ նպատակն էր, անշուշտ, ապահովել ընկերության և, մանավանդ, տարին երկու անգամ լույս տեսնող հանդեսի հրատարակության ծախսերը, որոնք բավականին բարձր են եղել և տարիների ընթացքում աճել են ֆրանսիական ֆրանկի աստիճանական արժեքազրկման հետևանքով։

Ընկերությունը հաստատվեց Արևելյան կենդանի լեզուների ազգ. բարձ. դպրոցում, և նրա ստացած հայագիտական գրականությունը հանձնարվում էր նույն դպրոցի գրադարանին։

Սկզբնական շրջանում գումարվել է տարեկան երկու, իսկ հետագայում մեկ նիստ, որոնց արձանագրությունները հրապարակված են հանդեսում։ Ընկերության նախագահն իր ղեկավարում ամփոփել է ընկերության տարեկան գործունեությունը, հարկ եղած դեպքում հանդեսին նյութապես օգնելու կոչ է արել անդամներին և բարերարների, դժվարին պահերին հույս է ներշնչել իր ընկերներին, դրվատանքով է հիշել հայագիտության վաստակավորներին և հայասերներին։ Ֆ. Մակլերի համեստությունից օգտվելով՝ նախագահը իրավացիորեն հաճախ հիշեցրել է նրա կատարած աշխատանքը հանդեսի համար. «Եթե մեր ընկերությունը բազմաճանաչում և ունենում է,—ասել է նա իր ղեկավարներից մեկում և կրկնել է բազմիցս,—ապա դրա գլխավոր պատճառն այն է, որ նա բախտ է ունեցել հանդիպելու անսպառ անձնվիրությամբ և եռանդով օժտված մի մարդու, որն ընկերությունը գլուխ բերելու համար չխնայեց ոչ իր ժամանակը, ոչ էլ աշխատանքը, մի մարդու, որ ձկուն և ճարպիկ դիվանագիտությամբ կարողացել է գրավել բարի կամքի տեր բոլոր մարդկանց, ստանալ ամեն տեսակ օգտակար աջակցություն, վերջապես՝ ընկերությունն ապահովել է ապրելու և հարատևելու միջոցներով... Առանց նրան ընկերությունը և նրա հանդեսը գոյություն չէին ունենա, մանավանդ չէին շարունակի ապրել» (Revue des Etudes arméniennes, հատ. Բ, էջ 372, 380. Դ, 266, Ե, 221. Զ, 375. Է, 352)։

Ընկերության անդամներն ամեն նիստում լսել են իրենց ընկերների մի քանի հաղորդումներ, որոնք մեծ մասամբ հրատարակված են հանդեսում և որոնց շուրջ տեղի են ունեցել մտքերի փոխանակումներ։ Այստեղ է, որ Մեյեն հաղորդել է իր աշակերտ Հ. Անաոյանի «Հայերեն արմատական բառարանի» հրատարակության մասին և վեր հանել այդ կոթող, աշխատության անդնաձևտեղի արժանիքները։ Դուրս հետաքրքրական է նշել, որ 1931 թ. փետ. 20-ի նիստում Քիթիլ Վ. Թորգոմյանն ընթերցում է մի հայ վաճառականի նամակի թարգմանությունը, որը մեծ հարստության էր տիրացել Հնդկաս-

տանում և երբ Ռուսաստանը գրավել է Արարատյան գավառն ու Ղարաբաղը, առաջարկել է Նիկոլա ցարին իր հարստությունը հատկացնել Ղարաբաղի իր հայրենակիցների վիճակի բարելավմանը: Ցարական կառավարությունը մերժել է նվիրատուի պայմանները. նա մահացել է նավարկության ժամանակ, և նրա ծրագիրը մրնում է անհետեանք» (Revue des Et. arm., հատ. ԺԱ, էջ 81): Ընկերության նիստերում, որպես սկզբունք, բաղադրական հարցերի մասին ո՛չ խոսել են, ո՛չ էլ վիճել: Ինչպես ասված է կանոնադրության, առաջին հոդվածում, ընկերությունը լուրջ պիտակա՛ն նպատակներ է հետապնդել:

Հայ դադուկների ազգային և մտավոր կյանքի զարգացմանն աջակցելու նպատակով, Վ. Պատաղյանի նախաձեռնությամբ և Մեյեի նախագահությամբ, 1924 թ. Փարիզում ընկերությունը կազմակերպել է հայագիտական բանասիրություններ հայերեն և ֆրանսերեն լեզուներով: Անվանի գիտնականներ զեկուցել են հայոց լեզվի, հայկական հավատալիքների, Հայաստանի աշխարհագրության և երկրաբանության, պատմության, երաժշտության, բանաստեղծության և հայ ժողովրդի գաղթների մասին (մանրամասն տե՛ս Revue des Et. arm., հատ. Դ, էջ 99—103):

1929 թ. նոյեմբերի 23-ին հայագիտության 56 բարեկամներ նշում են ընկերության և նրա հանդեսի հիմնադրման առաջին տասնամյակը: Ճառեր են արտասանում ընկերության նախագահ Շ. Դիլը, Վ. Սինապյանը՝ հիվանդության պատճառով բացակա Պ. Նուպար Փաշայի անունից, սենատոր Վիկտոր Բերարը, ակադեմիայի անդամ Ռենե Դյուսսոն և Ա. Զոպանյանը: Մեյեն հայտարարում է, որ հայ գիտության և հայ ժողովրդի համար ձեռնարկված դործը շարունակվելու է: Հանդեսի՝ այս առթիվ լույս տեսած հատորն ավելի հարուստ է բովանդակությամբ և հայկական ձեռագրերի գույնավոր մանրանկարներով: Սակայն մինչև այդ զեղեցիկ օրվան հասնելը ընկերությունն ապրել էր դժվարին տարիներ:

Դրամական հարցը եղել է ընկերության անբուժելի խոցը, նրա և հանդեսի խափանման միակ պատճառը: Ընկերության եկամուտը կազմել են անդամավճարները, հանդեսի վաճառքից դուրսացած աղքատիկ գումարը և գլխավորապես նվիրատվությունները: 1923 թ. սկսած, Դիտական հետազոտությունների ֆրանսիական դրամարկը և Պատմական, փիլիսոփայական ու իրավաբանական գիտությունների ֆրանսիական ընկերությունը գնահատելով հայագիտական հանդեսը, Դ. Մակլերի ջանքերի շնորհիվ ընկերությանն աջակցել են որոշ գումարով:

սակայն այս բոլորը շատ հեռու է եղել ընկերության և նրա հանդեսի ծախսերը բավարարելուց: Հիմնադրման հենց երկրորդ տարվա բուրգը դրամի պակասը ընկերության համար պարձել է մահու և կենաց խնդիր. դրամը գրեթե ամբողջովին ծախսվել է հանդեսի հրատարակության վրա: Այդպիսի պահերին օգնության են հասել նվիրատուներ. նրանցից են՝ գեղապետ Դուկասոյը, որն ստանձնել է հանդեսի առաջին հատորի 4-րդ պրակի հրատարակության ամբողջ ծախսերը, Պ. Նուպար Փաշան, Սերուրե Սվաճյանը, Նդիշե արք. Դուրյանը, Մարի Կյուպենկյանը, Լ. Գյումյուշ Դերդանը, Խան Ներսեսյանը, տիկ. Դափամանյանը, Վեներտիկի Մխիթարյանները, հ. Լուի Մարիեսը, անանուն նվիրատուներ և շատ ուրիշներ: Կարելի է ընկերության բարերարներ համարել նաև հանդեսի աշխատակիցներին, որոնք, առանց դրամական վարձատրության, հանդեսը լիովին բավարարել են հոգվածներով: ավելին՝ նրանք մեծ մասամբ ընկերության անդամներ էին և, ըստ այնմ, մոծել են տարեկան, երբեմն կրկնակի, անդամավճար: Մի՞թե ճիշտ չի լինի ասել, որ նրանք եղել են գիտությանն ամբողջովին նվիրված անշահախնդիր անձինք: Այս բոլորով հանդերձ, ամեն նոր տարվա նիստում ընկերության նախագահը օգնության է կանչել նորանոր բարերարների, խնդրել է ոչ միայն ժամանակին, այլև միանվագ մոծել անդամավճարները: Հորդորել է ներգրավել նոր անդամների: Նյութականի տեսակետից ընկերությունը համեմատաբար խաղաղ տարիներ է ապրել իր հիմնադրման երրորդ տարվանից մինչև 1930 թ.:

Ընկերության գանձարանի աղքատության պատճառով 1931 թ. հանդեսը լույս չի տեսնում: Այնուհանդերձ անդամները քվեարկությամբ որոշում են պահպանել ընկերությունը, թեև հանդեսի լույս ընծայումը նրա գոյության նախապայմանն էր. նրանք լավատեսորեն սպասում են ավելի պայծառ օրերի: Սակայն մնացած փոքր գումարով 1933 թ. լույս է տեսնում հանդեսի վերջին՝ ԺԱ քառակ հատորյակը 1931—1933 թթ. համար: Ընկերության տարեկան վերջին հավաքույթը գումարվել է 1933 թ. հունվարի 20-ին:

Ըստ երևույթին դրանից հետո հայագիտական ընկերությունը դադարել է գոյություն ունենալուց, որովհետև այլևս լույս չի տեսել նրա հանդեսը և մեզ ոչ մի տեղեկություն չի հասել նրա հետագա գործունեության մասին:

Փարիզի Հայագիտական ընկերության կատարած գիտական աշխատանքը այսօր գնահատվում է նրա հրատարակած Հայագիտական հանդեսի 22 ստվար գրքերով:

2. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԳԵՍ

Հիմնադրելով Հայագիտական ընկերությունը, Մեյլեն և Մակլերը կյանքի կոչեցին նրա գիտական հանդեսը, որը, ճիշտ է, կարճատև կյանք ունեցավ (1920—1933 թթ.), սակայն հայագիտությունը հարստացրեց խոստով տպագրված 11 հատորով:

հատ. Ա, 4 պրակ, 486 էջ, 1920—1921 թթ.	
» Բ, 2 » 385 » 1922 թ.	
» Գ, 1 » 150 » 1923 թ.	
» Դ, 2 » 272 » 1924 թ.	
» Ե, 2 » 230 » 1925 թ.	
» Զ, 2 » 385 » 1926 թ.	
» Է, 2 » 360 » 1927 թ.	
» Ը, 2 » 300 » 1928 թ.	
» Թ, 2 » 340 » 1929 թ.	
» Ժ, 2 » 285 » 1930 թ.	
» ԺԱ, 1 » 100 » 1931—1933 թթ.	

Հանդեսի խմբագիրներն ու ղեկավարները եղել են Մեյլեն և Մակլերը: աշխատակցել են ֆրանսիացի, հայ և այլ ազգի գիտնականներ: Թուրք հոգվածները գրվել են ֆրանսերեն լեզվով: Հանդեսն ունի լոկ հայագիտական բնույթ, բացառությամբ մի քանի նորավեպերի, որոնք պետք է ցույց տալին, ինչպես ասում է խմբագրությունը, որ չնայած պատերազմի մղմանը, հայ գրականությունը շարունակում է ապրել: Ի դեպ, ասենք, որ հայ գրողների երկերն ան ժամանակ ֆրանսերեն թարգմանությամբ լույս էին տեսնում Մակլերի «Հայկական մատենաշարում»: Հասկանալի է, որ այս հանդեսում տեղ չպետք է գտներ հայ քաղաքական կյանքը: Այդ ժամանակ ֆրանսիայում հրատարակվում էին հայ քաղաքական կյանքը լուսաբանող հանդեսներ, ինչպես՝ *Pro Armenia*, *La Voix de l'Arménie* և այլն:

Հանդեսի նպատակն անբաժանելի է ընկերության վեհ ձգտումից, որի իրականացման միջոցն էր այն. հայ քաղաքական դատից բացի գոյություն ուներ հայ մշակույթի դատը, հայագիտական այս հանդեսը նվիրվեց այդ դատի պաշտպանությանը: Պատերազմից հետո այն պետք է ցույց տար նրանց, որոնք չգիտեին, կամ գիտենալով հանդերձ մոռացության էրն տալիս, որ գոյություն ունի Հայաստան, հայ ազգ, որը գիտություն, բանաստեղծության, արվեստի գծով յուրահատուկ լուսածիր է թողել քաղաքակրթության պատմության մեջ: Հիշեցնելով հայ անցյալի փառավոր պատմությունը, հանդեսը իր գիտական գործունեությամբ պետք է ծառայեր տառապած հայ ժողովրդին: Հանդեսի յոթերորդ հատորի նախաբանում, որ որոշ հավելումներով կրկնությունն է առաջին հատորի նախաբանի, Մեյլեն և Մակլերը գրել են:

«Հայաստանը պետք է վայելի քաղաքակիրթ աշխարհի աջակցությունը: Նա ավելի հեշտ կրգտնի այդ աջակցությունը, երբ ճշգրիտ և անկողմնակալ ուսումնասիրությունները ցույց տան հայ ազգի յուրօրինակությունը, վիթխարի կենսունակությունը, եռանդը: Հանդեսի հոգվածները գերազանցապես պիտանի են հայկական դատի պաշտպանությանը այն իսկ պատճառով, որ դրանք ունեն գիտական բնույթ և, հետևաբար, մնայուն արժեք»:

Հանդեսը ձգտել է հայագիտական կենտրոն դառնալ արևմտամերձադական գիտնականների համար: Դրանից առաջ ֆրանսիան ունեցել էր հայագետների փայլուն համաստեղություն՝ Շահան Զրպետ, Դյուլորիե, Վիկտոր Լանզուս, Տուրնիերիզ, Օգյուստ Կարիեր և այլն: Սակայն առաջին անգամն էր, որ Նվրոպայում լույս էր տեսնում եվրոպական տարածված մի լեզվով շարագրվող հայագիտական հանդես: Ա. Չոպանյանը մի քանի անգամ հայտնել է այն կարծիքը (*Revue des Et. arm.*, հատ. Թ, 2, էջ 269, 1929 թ.), որ չնայած հայագետների բանքերին, նախքան հանդեսի հրատարակությունը Նվրոպայում շատերը դարմանում էին հայ հին գեղարվեստական գրականության և արվեստի գոյության մասին լսելիս: Նա պատմում է, որ երբ ինքը գնում էր Փարիզի ազգ. գրադարանը հայկական ձեռագրեր ուսումնասիրելու, վարիչը նրան ասում էր. «Ժամանակ մի՛ կորցնեք, դուք միայն հետևողություններ կդնեք, հայկական արվեստ չկա»: Հայագիտական հանդեսը (Ա. Չոպանյանի «Հայաստանի վարդարանների» հետ միասին) մեկը եղավ նրանցից, որոնք փարատեցին այդ անտեղյակությունը: Հանդեսի հոգվածներն իրենց լրջությամբ և դիտականությամբ հայագիտության դանձարանը հարստացնող մեծ ավանդ են:

Հանդեսի ամեն մի պրակի կառուցվածքը հետևյալն է՝ հիմնական հոգվածներ, հաղորդումներ, տեղեկատու, գրախոսություններ, մատենագիտական ցանկ, հայագիտական ընկերության նիստերի արձանագրություններ, ցանկեր: Հանդեսի ամենակարևոր բաժինները առաջին երկուսն են, ուր քննվում են հայագիտական ռազմազան հարցեր՝ հայոց լեզու և գրականություն (գրականագիտություն, բանահյուսություն, բանասիրություն), հին և նոր պատմություն, արվեստի տարրեր ընդգրկվածներ (գրչություն և մանրանկարչություն, գորգագործություն և ասեղնագործություն, ճարտարապետություն, խեցեգործություն, փորագրություն), բժշկության պատմություն և այլն:

Հայերենագիտական ուսումնասիրությունների մեծ մասը պատկանում է Մեյլեն, Հ. Աճառյանին, Է. Բենվենիստին, Լ. Մարիեսին, վերջինս

իր արժեքավոր հետազոտություններով զարգացրել է եզնիկագիտությունը։ Նրա դուխագործուցն է Սգնիկի գիտական հրատարակությունը՝ Ֆրանսերեն հիանալի թարգմանություն հետ միասին։

Տեղեկություններով հարուստ են Մակլերի ընդարձակ գեկույցները զանազան քաղաքներ ու հայ գաղութներ իր կատարած գիտական գործուղումների մասին։ Ըր անձնական ծանոթության, վայելած գիտական համրավի և նրան տրված արտոնության շնորհիվ նա կարողացել է Սվրուպայի գրադարաններում և թանգարաններում ոչ միայն տեսնել, այլև լուսանկարել ու նկարագրել հայերեն հազվագյուտ գրքեր, ձեռագրեր ու ձեռագրական պատառիկներ, հիշատակարաններ ու պահպանակներ, հայերին վերաբերող վավերագրեր և այլն, որոնք մինչև այդ մեծ մասամբ անտիպ էին, կորած էին համարվում, հիշատակված չէին ոչ միայն հրապարակված ցուցակներում, այլև նույնիսկ տրվելով գրադարանի կամ թանգարանի ֆոնդերի ուղեցույցներում։ Նա այդ բոլորն ընթերցողին մատուցել է հայագիտական հանգեսում, իր ընթերցումներին, թարգմանություններին և հրատարակած ծանոթագրություններին կցելով բազմաթիվ լուսատիպ պատճենումներ։ Նա հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում հայ գաղութների պատմության, մշակութային և հասարակական կյանքի (դպրոցների, եկեղեցիների, գերդաստանների ու նրանց գործունեության) մասին՝ լուսանկարներով հանդերձ։ Զեկույցներում տրված է նաև տվյալ գաղութի պատմությանը վերաբերող մատենագիտական գրականությունը։ Ուստի հանդեսի ստորև տրվող մատենագիտական ցանկում եթե Մակլերի գեկույցները և հոդվածներից շատերը գետնադուր ենք հայագիտության այս կամ այն բաժնում, ապա դա որոշ չափով պայմանական է։ Նույնը պետք է իմանալ նաև հանդեսի որոշ հոդվածների վերաբերյալ։ Ուրեմն խորհուրդ ենք տալիս աչքի անցկացնել հանդեսի ամբողջ բովանդակությունը։

Հանդեսի հոդվածագիրներին հասուկ է մի ձգտում, որ հաճախ բացահայտ կարգում ես կամ նկատում տողերի արանքում։ Հայ ժողովրդի անցյալի մտավոր արգասիքները, փառքի նյութական վկաների բեկորները բերդեր, տաճարներ, հարտարապետական հուշարձաններ, քաղաքների ավերակներ, ձեռագրեր, թագավորական դրամներ և ստորագրություններ և այլն նկարագրելիս ու հարկ եղած դեպքում դրանց բուն հայկական ծագումն ապացուցելիս հոդվածագիրները իրեն քաղաքակիրթ համարող եվրոպական աշխարհին հիշեցնում են, որ հայ ազգը ունի վաղուց ստեղծած մշակույթ, որով

կհպարտանար որեւէ զարգացած ժողովուրդ, որ նա պատվարեր տեղ է գրավում համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ։ սակայն նրա վաղնյակաժ փառքից մնացել են միայն հատակոտորներ, բեկորներ, ավերակներ։ Հուզիչ են Ն. Մառի հետևյալ տողերը նրա «Սին» հոդվածից. «Ազգային այս հուշարձանի հակատին [հայ] ազգը կարող էր արձանագրել ուս մեծ բանաստեղծի հետևյալ բառերը՝ «Ուզում եմ ապրել խոկալու և տանջվելու համար», սակայն դրանք շրջելով։ Հայերը մեկ հակատագիր են ունեցել անցյալում, մեծ ազգերի աղետավոր հակատագիրը—և դա նրանց սոսանձաշնորհ է—տանջվել։ Բայց նրանց ազգը տանջվել է ապրելու և ստեղծագործելու համար, իր ստեղծագործությունների մեջ գեղեցիկ լինելու համար. գա ճարտարապետական արվեստի բարձրագույն արգասիքն է» (Revue des Ét. arm., հատ. Դ, 395—396)։

Հանդեսի պատմագետ աշխատակիցները ընթերցողին ներկայացնելով փաստեր ու վավերագրեր, ցույց են տալիս, որ հայերը վաճառականական և մշակութային հարարերակցության մեջ են եղել եվրոպական երկրների, հատկապես Ֆրանսիայի հետ։ Հովհաննես Ալթընը որդան կարմրի մշակության տարածողն է Ֆրանսիայի Վընեսեն կոմսության մեջ. այժմ նրա արձանը կանգնեցված է նույնանուն քաղաքում։ Սգիպտական բուրգերի հաղթող նապոլեոնը բանակի հեա միասին Ֆրանսիա ներթափանցած մամուլիկների զգալի մասը հայ էր։

Երականագետ հոդվածագիրները լուսաբանում են հայ բանահյուսության կապերը արևելյան և արևմտյան ժողովուրդների բանավոր ստեղծագործության հետ։ Նրանցից ոմանք վեր են հանում այն փաստը, որ ֆրանսիացի, իտալացի, անգլիացի թատերագիրներ ու գրողներ հերոսներ են ընտրել ոչ միայն Հունաստանի և հռոմեական կայսրության, այլև Հայաստանի պատմությունից, և գա, բոտ նրանց, բացատրվում է այն հանգամանքով, որ այդ գրողների ժամանակ Հայաստանը հայտնի էր եվրոպական հասարակությանը և նրա հետաքրքրությունն էր շարժում։

Բժիշկ Վ. Թորգոմյանի հոդվածները շատ հետաքրքրական տվյալներ են հաղորդում հայ և ընդհանուր բժշկության պատմությունից։

Հայագիտական հանդեսը ներկայացրել է ոչ միայն ին, այլև իրեն ժամանակակից Հայաստանի պատմության կարևոր դրվագներ, դիվանագիտական վավերագրեր։ Այն հրապարակել է տեղեկություններ թե՛ պատերազմից անմիջապես հետո ստեղծված և թե՛ Խորհրդային հայկական հանրապետության մասին։ Հոդվածներ են նվիրված վերջինիս ուղղագրական բա-

րեփոխումների, հնագիտական պեղումների արդյունքների (հեղ. Հայկ Պերպերյան) վերաբերյալ. գրախոսվել և մասենադիտական ցանկում տեղ են դրել նրա հրատարակությունները: Հանդեսում հոդվածներ ունեն Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը: Այսպիսով՝ հանդեսը չի սահմանափակվել հայ անցյալի ուսումնասիրությանը և, որ շատ կարևոր է, առողջ դատողությամբ և իսկական հայասիրությամբ առաջնորդվելով՝ անտարբեր դիրք չի բռնել երոշրդալին Հայաստանի կամ հայրենադարձության նկատմամբ (տե՛ս պատմագիտական հոդվածները): Ընդհակառակն, Մելեն, օրինակ, «Հայերեն արմատական բառարանի» գրախոսության մեջ իր անկեղծ ուրախությունն է հայտնում, որ հայերին վերջապես հաջողվել է ստեղծել իրենց ճակատագրական, մայրենի լեզվով ուսուցող համալսարանը և որ Հ. Աճառյանն այնտեղ գտել է իր տաղանդին և գիտելիքներին արժանի տեղը: Հանդեսի ամեն մի հատորի վերջում Մակլերը ներկայացրել է տվյալ տարում, իսկ հավելվածում՝ դրանից առաջ լույս տեսած հայագիտական գրականության ցանկը, որը, ինչպես ասված է ծանոթության մեջ, թերի է:

Մասնագետների կողմից հանդեսում գրախոսված են բազմաթիվ հայագիտական աշխատություններ:

Հրատարակված նյութերի ճոխ լուսանկարների և հատուկ անունների ցանկերը հեշտացնում են հանդեսի օգտագործումը, որը, հուսով ենք, ավելի մատչելի կդառնա հանդեսի հոդվածների, գրախոսությունների ստորև տրվող ցանկով: Ընդհանուր մատենագիտության մեջ. *Revue des Etudes armeniennes* հայագիտական հանդեսի հապավված անվանումն է REA կամ REArm.:

3. ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒՆԿ REVUE DES ÉTUDES ARMÉNIENNES ՀԱՆԴԵՍԻ

Մանոթ. — Ելնելով հանդեսի հոդվածների հիմնական բովանդակությունից՝ աշխատել ենք դրանք խմբավորել ըստ հեղինակների ֆրանսերեն այբբենական կարգի, հայագիտության տարբեր ճյուղերի վերնագրերի տակ, ըստ որում նույն հեղինակի հոդվածների համար ընդունելով ժամանակագրային հերթականություն: Հոդվածի ֆրանսերեն վերնագրից հետո տալիս ենք նրա հայերեն թարգմանությունը: Նրա տեղը հանդեսում նշելիս շենք կրկնելու հանդեսի անունը կամ հապավումը, հայերեն պլաագիրը ջուլց է տալիս հանդեսի հատորը; իսկ նրան հաջորդող արարական թվանշանը՝ հատորի պարակր, այնուհետև նշվում են պրակի հրատարակության տարեթիվը և հոդվածի էջերը:

Լեզվաբանություն

1. Adjarian H., Etymologies arménienne (Հ. Աճառյան, հայերեն ստուգաբանություններ [պայ-պաշար]). Գ, 1923, 7—8:

2. Alphandéry P., Note sur une étymologie du mot *vartapet* (Ալֆանդերի Պ., Դիտողություն վարդապետ բառի մի ստուգաբանության մասին). Թ, 1, 1929, 2—3:

3. Benveniste E., Les nominatifs arméniens en-l (*Բենվենիստ Է., -ի վերջահանդ հայերեն ուղղականները*). Ժ, 1, 1930, 81—84:

4. Benveniste E., Sur -i-de arménien *merk.nu*. (*Բենվենիստ Է., հայերեն մերկ բառի -ո- -ի մասին*). Ժ, 2, 1930, 187:

5. Benveniste E., Titres iraniens en arménien (*Բենվենիստ Է., Իրանական տիտղոսներ հայերենում [նախարար — իշխան — սեպուհ — վարդապետ]*). Թ, 1, 1929, 5—10:

6. David-Beg M. S., Le mot *Tervagan* dans les chansons de geste (*Դավիթ-Բեկ Մ. Ս., Թևովագան բառը ֆրանսիական էպոսում*). Բ, 1, 1922, 65—83:

7. David-Beg M. S., Réformes orthographiques en Arménie (*Դավիթ-Բեկ Մ. Ս., Ուղղագրական բարեփոխումներ Հայաստանում*). Դ, 1, 1924, 7—20:

8. Mariès L., Note sur l'emploi de -ն avec *Աստուած* chez Eznik. (*Մարիես Լ., Դիտողություն ծգնիկի մոտ Աստուած բառի հետ -ն-ի կիրառության մասին*). Թ, 1, 1929, 99—112:

9. Mariès L., Sur la formation de l'aoriste et des subjunctifs en-չ- en arménien (*Մարիես Լ., Ցոյական անցյալ կատարյալի և ստորադասական ձևերի կազմության մասին*). Ժ, 2, 1930, 167—182:

10. Markwart J., Le berceau des Arméniens (*Մարկվարտ Յ., հայերի բնօրրանը*). Ը, 2, 1928, 211—232:

11. Meillet A., De l'influence parthe sur la langue arménienne (*Մելլե Ա., հայերենի կրած պարթևական ազդեցությունը. (տ. հայերենի հունական առաջին փոխառությունները — ր. հին հայերենի ժողովրդական բնույթի մասին)*). Ա, 1, 1920, 9—14:

12. Meillet A., Sur les adverbes այգր այաի (*Մելլե Ա., Այգր և այաի մակրայների մասին*). Ա, 1, 1920, 31:

13. Meillet A., Sur une famille de mots arméniens (*Մելլե Ա., հայերեն մի բառընտանիքի մասին [մանր — մամուկ]*). Ա, 2, 1920, 83—84:

14. Meillet A., Les nominatifs-accusatifs arméniens du type *harsu* (*Մելլե Ա., Հարսու*

սովորի հայերեն ուղղական-հայդականները).
Ա, 2, 1920, 81—82:

15. Meillet A., Sur les termes religieux iraniens en arménien (*Մեյե Ա., Հայերենի իրանյան կրոնական բառերի մասին*). Ա, 3, 1921, 233—236:

16. Meillet A., De quelques mots parthes en arménien (*Մեյե Ա., Հայերենի պարթևական մի քանի բառերի մասին [նահապետ — պարար — ժանդ — ներքինի — պաճոյա — պակաս]*). Բ, 1, 1922, 1—6:

17. Meillet A., A propos de նժդհ (*Մեյե Ա., նժդհ-ի առթիվ*). Բ, 2, 1922, 233—234:

18. Meillet A., La flexion en -a- d'adjectifs arméniens (*Մեյե Ա., Հայերենի ածականների -ա- հոլովումը*). Գ, 1923, 3—6:

19. Meillet A., Remarques etymologiques (*Մեյե Ա., Ստուգարանական գիտություններ [երկար — աղամ]*). Դ, 1, 1924, 1—6:

20. Meillet A., Le groupe de *sem-en arménien (*Մեյե Ա., *sem- հնչյունախումբը հայերենում*). Ե, 1, 1925, 1—4:

21. Meillet A., Sur l'étymologie de or (*Մեյե Ա., Որ-ի ստուգարանություն մասին*). Ե, 2, 1925, 183—184:

22. Meillet A., Sur le sens d'un passage d'Eznik (*Մեյե Ա., Եզնիկի մի հատվածի իմաստի մասին [արդասիր — կերպարանք — արդ — դարդ]*). Ե, 2, 1925, 179—181:

22ա. Meillet A., Une étymologie (*Մեյե Ա., Մի ստուգարանություն [ընկնում]*). 2, 1, 1926, 5—6:

23. Meillet A., Sur l'ablatif (*Մեյե Ա., Բացառականի մասին*). Ե, 1, 1927, 4—6:

24. Meillet A., A propos de l'interrogatif et relatif or (*Մեյե Ա., Որ հարացկանի և հարաբերականի առթիվ*). Ե, 1, 1927, 1—3:

25. Meillet A., Les noms du type ԻՐՇԱՆ (*Մեյե Ա., Քնշումի սովորի անունները*). Է, 1, 1928, 1—6:

26. Meillet A., Le mot ekeḡeḡi (*Մեյե Ա., եկեղեցի բառը*). Թ, 1, 1929, 131—136:

27. Meillet A., Observation sur l'étymologie de l'arménien 1. Sur le -w- (-ւ-) des aoristes arméniens 2. Կի (յղի) 3. Merk (*Մեյե Ա., Դիտողություններ հայերենի ստուգարանության վերաբերյալ. 1. Հայերեն անցյալ կատարյալ; 2. Զգի 3. Մերկ*). Ժ, 2, 1930, 183—186:

Գ Բ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Իսկանյուսություն

28. Dumézil G., Le dit de la princesse Satinik (*Գյումեզիլ Ժ., Ասր Սաթինիկ իշխանուհու մասին*). Թ, 1, 1929, 41—53:

29. Huet G., L'Arménie dans certaines versions de Bovon de Hantone (*Հյուե Ժ., Հայաստանը «Հանտոնի Բովոն» անգլո-նորմանդական էպոսի որոշ տարբերակներում*). Ա, 1, 1920, 55—62:

30. Macler F., Une forme arménienne du thème des «Amants malheureux» (*Մակլեր Բ., «Բժրախտ սիրահարներ»-ի թեմայի հայկական մի ձև [Մամոն և Զինե] հայ-քրդական պատմվածքի համառոտ շարադրումը*). Բ, 1, 1922, 91—116:

31. Sköld H., Comment se forment les légendes (*Սկյոլդ Հ., Ինչպես են ստեղծվում ափանդությունները*). Ե, 1, 1925, 137—138:

2. Դրամատիկական պատմություն

32. D'Hermigny S. (M.-S. Davio-Beg), Anouche. Poème de Johannès Toumanian (Introduction) (*Դավիթ-Բեկ Մ. Ս., Անուշ, պոեմ Հովհաննես Թումանյանի. ներածություն*). Ժ, 1, 1930, 85—86:

33. Gray H. L., Un drame anglais de source arménienne (*Գրեյ Հ. Հ., Հայկական ծագմամբ անգլիական մի դրամա*). Ե, 1, 1925, 141—145:

34. Herold A. F., Le Nicomède de Corneille et l'Arménie (*Հերոլդ Ա. Ֆ., Կորնելի Նիկոմեդ-ը և Հայաստան*). Գ, 1923, 57—61:

35. Herold A. F., Crébillon, Tacite et l'Arménie (*Հերոլդ Ա. Ֆ., Կրեբիյոն, Տակիտոս և Հայաստան*). Թ, 1, 1929, 55—59:

36. Macler F., Trois morts (*Մակլեր Բ., Երեք մահ. Հովհաննես Թումանյան*). Գ, 1923, 99—101:

37. Pachatian L., Le cinquantenaire de la mort du poète arménien Bedros Tourlian (*Բաչաչյան Հ., Հայ բանաստեղծ Պետրոս Դուրյանի մահվան հիսնամյակը*). Բ, 2, 1922, 327—330:

38. Tchobanian A., Quelques chansons de Djivant (Introduction) (*Չոպանյան Ա., Զիվանու մի քանի երգեր (ներածություն)*). Ա, 4, 1921, 427:

38ա. Tchobanian A., Bedros Tourlian, sa vie, son oeuvre (*Չոպանյան Ա., Պետրոս Դուրյան, կյանքը, գործը*). Բ, 2, 1922, 330—337:

39. Torkomian Dr. V., Note concernant la princesse arménienne Zénobie (Թորգոմյան Վ. րժիշկ, Տեղեկություն հայ իշխանուհի Չենոբիայի մասին [Խոսյացի թատերադիր Մետաստանի, 1698 - 1782, «Զենոբիա» թատերախաղի զերարկրյալ]). Ժ, 1930, 125—127:

3. Գեղարվեստական գոականություն

40. Aharonian A., Djavo (Nouvelle) (Ահարոնյան Ա., Ջավո [նորավեպ]). Գ, 2, 1924, 207—214:

41. Aharonian A., Le cavalier noir (Ահարոնյան Ա., Ան ձիավորը, թարգ. Յ. Մակկեր). Ժ, 2, 1930, 201—212:

42. Tourian B., Elle — Que dit-on? — Murmures — Sur le tombeau du très cher Varian Loutfian — Gémissements — Ma peine (Դուրյան Գ., Նե — Ինչ կըսեն — Հեծեծ — Դամբանական ի մահ Վարդան Լուծիկյանի — Տրտունջ — Իմ ցավը. թարգ. Ա. Զոպանյան). Բ, 2, 1922, 337—341:

43. Toumanian H., Anouche (Traduction. M.-S. David-Beg (Թումանյան Հ., Անուշ. թարգ. Դավիթ-Բեկ Մ. Ս.). Ժ, 1, 1930, 75—145:

44. Djivani, Quelques chansons (Traduction), A. Tchobanian (Ջիվանի, Մի քանի երգեր. թարգ. Ա. Զոպանյան). Ա, 4, 1921, 428—431:

45. Mme Iskouhie Minasse, La bête blessée (Իսկուհի Մինաս, Վիրավոր կենդանին [նորավեպ]). Բ, 2, 1922, 319—326:

46. Mme Iskouhie Minasse, Le démon du hasard... (Nouvelle) (Իսկուհի Մինաս, Գառահականության սատանան... [նորավեպ]). Զ, 2, 1926, 149—158:

Պատմություն

47. Adontz N., Grégoire l'illuminateur et Anak le Parthe (Ադոնց Ն., Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթե). Ը, 2, 1928, 233—245:

48. Basmadjian K. J., Une nouvelle signature de Lévon 1^{er} roi de la Petite Arménie (Բասմաջյան Կ. Հ., Փոքր Հայքի Լևոն Ա. թագավորի մի նոր ստորագրություն). Գ, 1, 1924, 25—29:

49. Blanchet A., Un aventurier français devenu vice-roi d'Arménie au temps d'Henri IV (Բլանշե Ա., Հենրիկոս Գ.-ի ժամանակ Հայաստանի փոխարքա դարձած Ֆրանսիացի մի բախտախնդիր). Ժ, 2, 1930, 189—192:

50. Brémond Ed., La Cilicie en 1919—1920 (Բրեմոն Էդ., Կիլիկիան 1919—1920 թթ [լուսանկարներով. Կիլիկիայի ռաբոտնիկով]). Ա, 3, 1921, 303—376:

51. Brémond Ed., Espoirs (Բրեմոն Էդ. զնդապետ, հույսեր). Թ, 1, 1929, 11—12:

52. Brou, R. P. Alex., Un Arménien à la cour des Grands Mongois (Բրու. Ն. Ալեքս., Մի հայ Մեծ մոնղոլների [Հնդկաստանի] արքունիքում [ԺԶ դարի առաջին թառորդ, Իսկանդար կամ Ալեքսանդր]). Գ, 1923, 47—55:

53. Comité français de secours aux victimes des événements d'Orient. Appel à l'opinion (Novembre 1922) (Արևելքի իրադարձությունների զոհերի օգնություն կոմիտե, Կոչ հասարակական կարծիքին, նոյեմբեր 1922 թ.). Գ, 1923, 83—88:

54. Duquet (le médecin principal), La situation des réfugiés au Liban et en Syrie (Դյուկե, գլխ. բժիշկ, Գաղթականների վիճակը Լիբանանում և Սիրիայում). Ը, 1, 1928, 49—61:

55. Dupont-Ferrier G., Les Jeunes de Langues ou «Arméniens» à Lous-le-Grand (Դյուպոն-Ֆերրիե Գ., Թարգմաններ կամ «հայեր» Լուս-լը-Գրան կոլեժում). Բ, 2, 1922, 189—232, Գ, 1923, 9—32:

56. Dupont-Ferrier G., Listes chronologiques sommaires des Jeunes de Langues, de leurs administrateurs, professeurs et maîtres, de 1670 à nos jours (Դյուպոն-Ֆերրիե Գ., Թարգմանների, նրանց վարիչների և դասախոսների ժամանակագրական համառոտ ցուցակները, 1670 թ. մինչև մեր օրերը). Բ, 1923, 33—46:

57. Ed. Ch., La Suisse et l'Arménie (Էդ. Շ., Շվեյցարիան և Հայաստանը). Ը, 1, 1928, 67—68:

58. Essayan Z., Le rôle de la femme arménienne pendant la guerre (Եսայան Չ., Հայ կնոջ դերը պատերազմի ժամանակ). Բ, 1, 1922, 121—138:

59. Ghazarossian L., Souvenirs d'une infirmière en Cilicie (juin—octobre 1919) (Ղազարոսյան Լ., Կիլիկյան բուժքրոջ հուշեր, հունիս—հոկտեմբեր 1919 թ. [լուսանկարներով]). Ա, 3, 1921, 376—382:

60. Huart Cl., Une razzia en Arménie au X^e siècle (Հյուար Կլ., Ասպատակություն Հայաստանում Ժ. դարում). Ա, 4, 1921, 419—422:

61. Laurent J., Les origines médiévales de la question arménienne (Լորան Ժ., Հայկական հարցի միջնադարյան ծագումը). Ա, 1, 1920, 35—54:

62. Laurent J., Un feodal armenien au IX^e siècle: Gourguen Ardzrouni, fils d'Abou Beldj (*Լորան Ժ., Մի հայ ճորտատեր Բ. դարում. Գուրգեն Արժրունի որդի Աբու Բելժի*). Բ, 2, 1922, 137—188:

63. Laurent M. J., Bysance et Antioche sous le curopalate Philarète (*Լորան Ժ., Բյուզանդիան և Անտիոքը Փիլարետ կյուրոպալատի ժամանակ*). Թ, 1, 1929, 62—72:

64. Ligue internationale philarménienne. Appel à la conférence de la paix (octobre 1922) (*Հայասիրական միջազգային լիգայի կոմիտե, Կոչ Խաղաղության համաժողովին, հոկտեմբեր 1922 թ.*). Գ, 1923, 81—82:

65. Ligue internationale philarménienne. Lettre adressée aux représentants de la Grande-Bretagne, de la France et de L'Italie, à la conférence de Lausanne en date du 19 janvier 1923 (*Հայասիրական միջազգային լիգա, նամակ [հունվարի 19 1923 թ.] Լոզանի համաժողովին մասնակից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներին*). Գ, 1923, 93—95:

66. Macler F., Le procès de Talaat Pacha (*Մակլեր Ֆ., Թալատի փաշայի դատավարությունը*). Բ, 1, 1922, 139—145:

67. Macler F., Trois morts (*Մակլեր Ֆ., երեք մահ. [Սեփան Մամիկոնյան, Մուսկվայի հայկ. կոմիտեի նախագահ — Գուրգեն Պաստրմաջյան (Արմեն Գարո) — Հովհաննես Թումանյան]*). Գ, 1923, 99—101:

68. Macler F., Les Arméniens de Galicie (*Մակլեր Ֆ., Գալիցիայի հայերը*). Զ, 1, 1926, 7—17:

69. Macler F., Rapport sur une mission scientifique en Galicie et en Bukovine (juillet—août 1925) (*Մակլեր Ֆ., Զեկույց Գալիցիա և Բուկովինիա կատարած գիտական գործուղման մասին, հունիս—օգոստոս 1925*). Է, 1, 1927, 11—178:

70. Movsessian Gh., Histoire des trots Kurikian de Lori (Tradult de l'arménien et annoté par F. Macler) (*Մովսեսյան Դ., Լորիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, թարգմանություն և ծանոթագրություններ Ֆ. Մակլերի*). Է, 2, 1927, 209—266:

71. Macler F., Notes de voyage. Genève (*Մակլեր Ֆ., ճանապարհորդական նոթեր — ժնև*). Է, 2, 1927, 297—303:

72. Macler F., Une école franco-arménienne à Paris (*Մակլեր Ֆ., Ֆրանս-հայկական մի դպրոց Փարիզում [Մուրադյան վարժարան]*). Բ, 1, 1928, 39—42:

73. Macler F., Donations et libéralités (*Մակլեր Ֆ., նվիրատվություններ և պարգև-*

ներ [Գոգոս Նուսյար Փաշայի նվիրատվությունները]). Բ, 2, 1928, 247—250:

74. Macler F., Rapport sur une mission scientifique en Roumante (juin—août 1927) (*Մակլեր Ֆ., Զեկույց Թուրքիա կատարած գիտական գործուղման մասին, հունիս—օգոստոս 1927*). Ժ, 1, 1930, 1—80:

75. Մանանդյան Հ., Հայաստանի հին ճանապարհները, Ժ, 1, 1930, 139—142. Նույնի ֆրանսերեն թարգմանությունը, 143—145. Գերմաներեն թարգմանությունը՝ 145—147:

76. Mandelstam A. N., La Société des Nations et les Puissances devant le problème arménien (*Մանդելշտամ Ն. Ա., Ազգերի կազմակերպությունը և տերությունները հայկական խնդրի առաջ [հատվածներ]*). Զ, 1, 1926, 33—35:

77. Markwart J., Le berceau des Arméniens (*Մարկվարտ Յ., Հայերի բնօրրանը*). Բ, 2, 1928, 211—232:

78. Marty, général, Discours à l'inauguration du monument aux morts à Adana (*Մարտի, զնդապետ, Ոսոս հանդուցյալների հուշարձանի բացմանը (Ադանայում)*). Բ, 1, 1922, 147—151:

79. Massé H., Le sultan seldjoukide Keykbad 1er et l'Arménie. Documents persans, traduits par Henri Massé (*Մասսե Հ., Բեյքոբադ Ա. սելջուկ սուլթանը և Հայաստան: Պարսկերեն վավերագրեր, թարգմանություն Հ. Մասսեի*). Թ, 1, 1929, 113—129:

80. Mathorez J., Notules sur quelques arméniens avant vécu en France avant 1789 (*Մաթորե Ժ., Համառոտ տեղեկություններ 1789 թ. առաջ Ֆրանսիայում ապրած մի քանի հայերի մասին*). Բ, 1, 1922, 83—90:

81. Mathorez J., Les Arméniens en France de 1789 à nos jours (*Մաթորե Ժ., Հայերը Ֆրանսիայում 1789 թ. մինչև մեր օրերը*). Բ, 2, 1922, 293—314:

82. Mécérian J., Les réfugiés arméniens en Syrie (*Մեկերյան Հ., Հայ դադթականները Սիրիայում*). Գ, 2, 1924, 221—230:

83. Meillet A., L'Etat arménien (*Մեյլե Ա., Հայկական պետություն*). Ա, 2, 1920, 139—140:

84. Meillet A., Statistique de l'Arménie Soviet. (*Մեյլե Ա., Խորհրդային Հայաստանի վիճակագրություն*). Բ, 1, 1922, 146:

85. Meillet A., Note sur la Loi fondamentale de l'Union des Républiques Socialistes Soviétiques (*Մեյլե Ա., Ճեզեզություն Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության սահմանադրության մասին*). Գ, 1923, 79—80:

86. Meillet A., Un appel pour l'Arménie (*Մեյն Ա., Կոչ հանուն Հայաստանի*). Դ, 1923, 89—91.

87. Meillet A., Le Traité de Lausanne (*Մեյն Ա., Լոզանի դաշնագիրը*). Դ, 1923, 97—98.

88. Minorsky M. V., Le nom de Dvin. — Kasal Kazah (*Մինորսկի Մ. Վ., Դվին անունը — Kasal Kazah (ժեկ բարոնդ)*). Ժ, 1, 1930, 117—123.

89. Mitard Mme., Enquête sur la situation morale et matérielle des Arméniens dans l'Ardèche (*Միտար տիկ., Տեղեկություններ դեպի [Ֆրանսիա] հայերի բարոյական և նյութական կացության մասին [հայրենադարձություն]*). Ը, 1, 1928, 63—65.

90. Peeters R. P. Paul, Le début de la persécution de Sapor d'après Fauste de Bézance (*Պետերս Զ. Պ., Շապուհի հալածանքի սկիզբը բուռ Փավստոս Բյուզանդացու*). Ա, 1, 1920, 15—33.

91. Poidebard A., Rôle militaire des Arméniens sur le front du Caucase après la défaite de l'armée russe (décembre 1917—novembre 1918) (*Պուադրբար Ա., հայերի դինամորական դերը կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի պարտությունից հետո. դեկտեմբեր 1917 թ.—նոյեմբեր 1918 թ. [1918 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ]*). Ա, 2, 1920, 143—161.

92. Poidebard A., Le Transcaucase et la République d'Arménie dans les textes diplomatiques du Traité de Brest-Litovsk au traité de Kars. 1918—1921 (*Պուադրբար Ա., Անդրկովկասը և Հայկական հանրապետությունը դիվանագիտական փաստաթղթերում Բրեստ-Լիտվսկի դաշնագրից մինչև Ղարսի դաշնագիրը, 1918—1921 թթ. [երեք բարտեղ]*). Դ, 1923, 63—78. նույնի՝ Հավելվածներ, դիվանագիտական փափերագրեր, Բ, 1, 1924, 31—98.

93. Sköld H., L'origine des Mamiconiens d'après Moïse de Khorène (*Սքյոլդ Հ., Մամիկոնյանների ծագումն ըստ Մովսես Խորենացու*). Ե, 1, 1925, 131—136.

